Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

22.09.2021թ քաղաք Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ՝ Արմենուհի Մելքոնյանս ուսումնասիրելով 24.02.2021թ. վերսկսված թիվ 05212340 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 19.02.2021 թվականին տրված թիվ ԵԴ/14938/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Էդուարդ Անուշավանի Վանցյանից Ներիկ Անդրանիկի Բեգլարյանի օգտին բռնագանձել 28.155.600 ՀՀ դրամ և վճռով հաշվարկվող տոկոսները:

Պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Թիվ ԵԴ/14938/02/19 կատարողական թերթով բռնագանձումը տարածելու նպատակով պարտապանին սեփականության իրավունքով պատկանող Mitsubishi Pajero IO 1.8 մակնիշի 35 CP 906 համարանիշի և Opel Corsa 1.4 մակնիշի 35 GU 916 համարանիշի շարժական գույքերի շուկայական արժեքը պարզելու համար 19.03.2021թ. նշանակվել է փորձագետ, որի կատարումը հանձնվել է «Էքսպերտ Պրոֆ Գրուպ» ՍՊԸ-ին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված և ձեռնարկված հարկադիր կատարման միջոցների կիրառման արդյունքում պարտապանին սեփականության իրավունքով պատկանող Mitsubishi Pajero IO 1.8 մակնիշի 35 CP 906 համարանիշի և Opel Corsa 1.4 մակնիշի 35 GU 916 համարանիշի տրանսպորտային միջոցների շուկայական արժեքները փորձագետի կողմից 29.04.2021թ. տրված եզրակացության համաձայն համապատասխանաբար կազմում են 1.110.000 և 726.000 ՀՀ դրամ:

Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի կատարման ընթացքում պարտապան Էդուարդ Անուշավանի Վանցյանի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավել չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և թիվ 05212340 կատարողական վարույթը 30.04.2021թ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով կասեցվել է 90-օրյա ժամկետով. «...առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան», սակայն, սահմանված ժամկետում սնանկության դիմելու վերաբերյալ հավաստող որևէ փաստաթղթով Ծառայությունը չի ծանուցվել:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում արգելանք է դրվել և գրանվվել պարտապան Էդուարդ Անուշավանի Վանցյանին պատկանող Mitsubishi Pajero IO

Digitally signed by MELKONYAN ARMENUHI
2010950313
Date: 2021.10.12 10:38:12 AMT

1.8 մակնիշի 35 CP 906 համարանիշի և Opel Corsa 1.4 մակնիշի 35 GU 916 համարանիշի շարժական գույքերը:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում պարզվել է, որ Mitsubishi Pajero IO 1.8 մակնիշի 35 CP 906 համարանիշի և Opel Corsa 1.4 մակնիշի 35 GU 916 համարանիշի ավտոմեքենաները համարվում են համատեղ կյանքում ձեռքբերված գույք /հիմք՝ 31.10.1997թ. ամուսնության վկայական՝ ԱԱ040151, ակտ թիվ՝ 755/ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 47.1 հոդվածի համաձայն 13.08.2021թ. թիվ Ել5855/07 գրությամբ Գայանե Վանցյանին առաջարկվել է մեկամսյա ժամկետում օգտվել գույքի գնման նախապատվության իրավունքից, սակայն, սահմանված ժամկետում նախապատվության իրավունքից օգտվելու վերաբերյալ հավաստող որևէ փաստաթղթով Ծառայությունը չի ծանուցվել:

Պարտապանի վերաբերյալ առկա են հարուցված բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

պարտապան Էդուարդ Անուշավանի Վանցյանին պատկանող ներքոհիշյալ գույքը՝

ՀՀ	**Գույքի անվանումը և նկարագիրը**	**Գնահատման գինը**	**Մեկնարկային գինը**	**Գույքի քանակը**
1.	«Mitsubishi Pajero IO 1.8» մակնիշի 35 CP 906 համարանիշ, 1998թ	1.110.000 ՀՀ դրամ	832.500 ՀՀ դրամ	1 հատ
2.	«Opel Corsa 1.4» մակնիշի 35 GU 916 համարանիշ, 1993թ	726.000 ՀՀ դրամ	544.500 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը սահմանել՝ 22.11.2021թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմներին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասին համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հարկադիր կատարող
Արդարադատության լեյտենանտ Ա.Մելքոնյան

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: